

ՄԵԼԳՈՆԵԱՆ ԿՏԱԿԻ ԻՐԱԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

Մելգոնեան Կրթական Հաստատության Տազնաային Առընչութեամբ

Դոկտ. Ն. Պէլլերեան

Ասիաներէ ի վեր Հայ մասնուր լայն տեղ կը յատկացնէ ի մասին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՎԲԸՄ) որոշումին, ըստ որուն Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը (ՄԿՀ) պիտի դադրի ըլլալէ գիշերօթիկ վարժարան մը, ուր կ'ուսանէին 200-է աւելի Հայ աշակերտներ, եւ պիտի վերածուի ցերեկօթիկ դպրոցի մը Նիկոսիոյ փոքրաթիւ Հայ գաղութին համար:

Ի դէպ' այս որոշումը կը նշանակէ փակել ՄԿՀ'ն: Յիրաւի Նիկոսիոյ հայերը վարժարան մը բաց պահելու Կիպրոսի պէտական չափերուն համապատասխան թիւով աշակերտ չեն կրնար տալ: Մինչդեռ ՄԿՀ'ն հիմնուած ու ծառայելու կոչուած է' բոլոր վայրերու հայոց, մասնաւորաբար արեւմտահայ աշակերտներու կրթութեան ի նպաստ:

Թեր ու դէմ շատ գաղափարներ արտայայտուեցան խորիմաց անձերու կողմէ, եւ ուրախ ենք տեսնելու որ ամէնքին ալ հետապնդածը միայն ու միայն Հայ ազգին բարօրութիւնն է, թէեւ տարբեր ձեւերով. ոմանք կ'ուզեն անօթիները կերակրել, ոմանք կը ստահոգուին Հայորդիներու առողջապահութեամբ, ուրիշներ կ'ուզեն Արցախի կամ Հայաստանի մէջ ուսամական կեդրոններ հիմնել, եւն: Երանի ունենայինք բազմաթիւ հարուստ ազգային բարերարներ որպէսզի այդ բոլոր երազներն ալ իրականանալու առիթը ունենային, ինչպէս որ կ'ընէ Գըրգ Գրգորեանը, նորոգելով մեր մայրաքաղաքի ենթակառուցը:

Ասկէ 5 տարի առաջ ալ Հայ ժողովուրդը կը գտնուէր դժուարին կացութեան մէջ. ինչ կ'ըսեմ, շատ աւելի դժուարին կացութեան մէջ քան այսօր: Մօտ 3 միլիոն Արեւմտահայերէն քանի մը հարիւր հազար Հայ միայն Միջին Արեւելքի կարգ մը երկիրներու մէջ ապաստան գտած էր, շնորհիւ Արաբ, Պարսիկ եւ Յոյն ժողովուրդներու հիւրընկալութեան, առանց գիտնալու թէ վաղուայ հացը ուրկէ պիտի գար, կամ ինչ ապագայ կը սպասէր իրենց եւ իրենց սերունդներուն:

Թերեւս ո՛չ այսօրուայ պէս մեծ թիւով, բայց այն ստեն ալ ունէինք հարուստ բարերարներ, որոնք իրենց սրտի ձայնին համաձայն փորձեցին օգնել իրենց ժողովուրդին:

Անոնցմէ էին Աղա Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեաններ, Կեսարացի Հայեր որոնք հաստատուած էին Եգիպտոսի մէջ եւ կը զբաղէին ծխախոտի վաճառականութեամբ: Անոնք Ա. պատերազմի ընթացքին, կրցած են մեծ յարստութեան տիրանալ: Երկուքն ալ ըլլալով ամուրի եւ տարեց, որոշեցին իրենց հարստութիւնը նուիրել Հայ ժողովուրդի յառաջդիմութեան, Հայեցի կրթութեան միջոցաւ:

Յիշենք որ Մելգոնեան եղբայրները առիթ չէին ունեցած ստանալու հայեցի կրթութիւն եւ նոյնիսկ իրենց անունը հայերէնով ուղիղ գրել չէին գիտեր. այդ պատճառաւ ալ «Մելգոնեանը» այսօր կը գրուի գ'ով, ինչպէս իրենք կը գրէին:

Աղա Գրիգոր վախճանեցաւ 1920ին: Իսկ Աղա Կարապետ, որ ապրեցաւ մինչեւ 1934, կրցած է տեսնել իրենց երազին իրականացումը:

Աղա Կարապետ, ճարպիկ գործի մարդ, իրենց ժառանգը հաստատ հիսներու վրայ դնելու համար 1925-ին կնքեց հասնաձայնութիւն մը ՎԲԸՄ-ի հետ, որուն կ'ակնարկուի որպէս Մելգոնեան Կտակ, կամ Ժառանգ, կամ Նասնաձայնութիւն:

Երբ այսօր կը վիճինք թէ Մելգոնեանի ապագան ի՞նչ պէտք է ըլլայ, կը մոռնանք որ պատասխանը պէտք է փնտռենք այդ Նասնաձայնութեանմէջ, զոր Կարապետ Մելգոնեան կնքեց ՎԲԸՄ-ի հետ:

Ուստի, ստորեւ կու տանք Նայերէն թարգմանութիւնը Աղա Կարապետ Մելգոնեանի եւ ՎԲԸՄ-ի Նասնաձայնութեան, զանց առնելով կարգ մը մանրամասնութիւններ, որոնք չեն խեղաթիւրեր Նասնաձայնութեան իմաստը եւ ոգին: Ապա հանրութեան կը յանձնենք այս Նասնաձայնութեանմէջ իրաւական կարեւորութիւն ներկայացնող գաղափարները եւ անոնց մեկնաբանութիւնն ու վերլուծումը. միշտ դիտուած իրաւական տեսանկիւնէ: Փակագծի մէջ (101), (102), եւն, թիւերով ձեր ուշադրութեան կը յանձնենք այն պարբերութիւնները որոնց կ'ակնարկենք:

ՓՈԽԱՆՑՄԱՆ ՆԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ

(Ներկայ թարգմանութիւնը, կատարած ենք անգլիերէնէ որ իր կարգին վաւերացուած թարգմանութիւնն է ֆրանսերէն բնագրին: Զայն կը հրատարակենք Մ. Սարաֆեանի եւ Վ. Օգինեանի յատուկ արտոնութիւնովը):

1925, Դեկտ. 28 ժամը 11-ին Աղեքսանդրիայի Միացեալ Ա. Դատարանի մէջ 4 անձեր ներկայացան ինծի՝ Նուրիստնի, որպէս նոտարը այս դատարանին, ի ներկայութեան վկաներու՝ Պարոններ Ահմէտ Ապտիւ Ազիզի՝ զաւակը գործատէր Ապտէլ Ազիզի, եւ Նէկիպ Լիան՝ զաւակը պաշտօնեայ Ասատի. երկուքն ալ ծնած յԱղեքսանդրիայ եւ բնակիչ՝ յԱղեքսանդրիայ:

Նարկատը վկաները որոնք իրենց դիրքերով լրացուցին օրէնքի պահանջները, հաստատեցին ինքնութիւնը հետեւեալ անձերուն որոնք ներկայացան ինծի,

1. Ամենապատիւ Զաւէն Տէր Եղիայեան, ծնած Մուսուլի մէջ, զաւակը մահացեալ Աւետիսի, որ էր զաւակը մահացեալ Եղիայի. Պատրիարք Նայոց Կ.Պոլսոյ, որ կ'անցնէր Աղեքսանդրիայէն:

2. Փաստարան Պրն. Գէորգ Գայարեան, ծնած Խարբերդ, Ասիական Թուրքիայ, զաւակը այժմ մահացեալ Յակոբի, որ էր զաւակը մահացեալ Ժանի. տեղացի անձ մը որ կը բնակի յԱղեքսանդրիոյ. կը ներկայացնէ Բարձրաշնորհ Գէորգ Արալանեանը, Նայ Արքեպիսկոպոս, որ Տեղապահն է Կ.Պոլսոյ Պատրիարքութեան եւ կը բնակի Գում Գաբուի Պատրիարքարանը: Կ.Պոլսոյ 4-րդ նոտարի, Ալի Մուրթազայի ստորագրութիւնը եւ կնիքը Նոկտ. 25, 1925 թուականի թիւ 14406 փաստաթուղթով իրաւունք կու տայ Գայարեանին ներկայացուցիչ ըլլալու: Այս փաստաթուղթը Թուրք կառավարութեան Արտաքին Գործոց Նախարարութեան կողմէ՝ Նոկտ. 26, 1925 թիւ 3555 թուղթով եւ նոյն օրն ալ Անգլիական հիւպատոսարանին կողմէ՝ վաւերացուած է: Այս փոխանորդագիրը կցուած է Դեկտ. 9, 1925-ին ստացուած թիւ 443 Նասնաձայնագրին: Այս երկու անձերը որոնք ինծի ներկայացան, կը ներկայացնեն Պոլսոյ Պատրիարքութիւնը, որպէս Ա. Կողմ:

3.Պրն. Հայկ Ինայերեան, որդին այժմ մահացեալ Ժօզէֆի, զաւակը մահացեալ Սահակի. ծնած Կեսարիայ, Ասիական Թուրքիայ. վաճառական. տեղացի. Գահիրէքնակ, ներկայացնելով Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, Չուիցերիական ընկերութիւն սը, որուն կեդրոնը Լօզան է: Իր ներկայացուցիչի հանգամանքը վաւերացուած է Դեկտ. 4, 1925 թիւ 3475 թուղթով, նոտար Անրի Սասուէլի կողմէ, Լօզան, որու ստորագրութիւնը եւ կնիքը հաստատուած են Չուիցերիոյ Վօ Քանթօնին կողմէ, Դեկտ. , 1925 թիւ 165 թուղթով, որ վաւերացուած է Չուիցերիոյ Հասնադաշնակցային Կառավարութեան Դեկտ. 9, 1925 թիւ 1520 թուղթով, եւ որ վաւերացուած է ժընեւի Եգիպտական Հիւպատոսարանին կողմէ Դեկտ. 15, 1925 թիւ 26 թուղթով: Ան կը ներկայացնէ Բ. Կողմը:

4.Պրն. Կարապետ Մելգոնեան, որդին այժմ մահացեալ Արթինի, որ էր որդին մահացեալ Յակոբի. ծնած Կեսարիայ, Ասիական Թուրքիայ. հանգստեան կոչուած. տեղացի, որ այժմ կը բնակի յԱղեքսանդրիայ. որպէս Գ. Կողմ:

Այս երեք կողմերը ուզեցին որ հաստատեմ այս Հասնաձայնագիրը, եւ որպէս նախաբան, յայտնեցին հետեւեալը.-

Յուլիս 25, 1921-ին թիւ 1642 փաստաթուղթով այս գրասենեակին մէջ արձանագրուած, Աղեքսանդրիոյ եւ Գահիրէի սիացեալ դատարանի 1 եւ 18 Օգոստոս 1921 թիւ 17937 եւ 2418 փաստաթուղթերով, եւ Կալիուպիէի 4829 թիւ փաստաթուղթով, Պրն. Կարապետ Մելգոնեան, որ վերը նկրագրուած է, նուիրեց իր շարժուն եւ անշարժ կալուածները, գործարանները, ալրանքները, դրամ, ելն, ինչպէս մանրամասնութիւնները տրուած են այդ փաստաթուղթերուն մէջ, Ամենապատիւ Զաւէն Տէր Եղիայեանի, որպէս Պատրիարք Հայոց Կ.Պոլսոյ, որպէսզի գործածէ զանոնք հիմնելու եւ պահելու 3 դպրոցներ Հայ տղոց եւ աղջկանց, Թրքահայաստանի եւ Կիլիկիոյ մէջ: (101)

Բայց անակնկալ քաղաքական դէպքեր որոնք տեղի ունեցան մինչ այդ Թուրքիոյ եւ Կիլիկիոյ մէջ, շատ դժուար եւ գրեթէ անկարելի դարձուցին իրագործել այդ նպատակները, որոնք կը հետապնդուէին նուիրատուութեան ատեն: Ուստի, Ա. եւ Գ. Կողմերը, ուզելով իրագործել այդ նոյն նպատակները, երկրորդ Հասնաձայնութեամբ սը, որ կնքուեցաւ այստեղ Յունուար 5, 1924 թիւ 37 գրանցումով յԱղեքսանդրիայ, եւ Յունուար 10, 1924 թիւ 47 եւ Մարտ 19, 1924 թիւ 396 Գահիրէի մէջ, ջնջած են այն պայմանները զորս ստեղծած էին Յուլիս 24, 1921 թուականին, այսպէսով ազատ կացուցած նուիրատուն, որպէսզի ան կարենայ հիմնել որբանոցներ եւ դպրոցներ այլ վայրերու մէջ որոնք աւելի յարմար կը դատէ: (102)

Արդարեւ, Կ.Պոլսոյ Պատրիարքութիւնը արդէն կառուցած է Նիկոսիոյ մէջ, Կիպրոս, երկու որբանոց-դպրոցներ որոնք ծանօթ են «Մելգոնեան Հաստատութիւններ» անունով: (103)

Եւ որպէսզի աւելի լաւ կառավարուին եւ մատակարարուին եւ անոնց ապագան ապահովուի, Ամենապատիւ Զաւէն եւ Բարձրաշնորհ Գէորգ Արալանեան, մեկնելով իրենց հանգամանքէն, յարմար դատեցին փոխանցել ՀԲԸՄին, ձրիաբար, բոլոր ստացուածքները եւ իրատունքները զորս ստացած էին Կարապետ Մելգոնեանի նուէրով: (104)

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը յանձն առած ըլլալով այս պարտականութիւնը, որուն Պրն. Կարապետ Մելգոնեան հաւանած է, հետեւեալ կէտերու վրայ համաձայնութիւն գոյացած է կողմերու միջեւ.- (105)

ՅՕԴՈՒԱԾ 1.

Այն ինչ որ վարը կը նկարագրուի, անբաժան մասը կը կազմէ այս համաձայնագրին:

ՅՕԴՈՒԱԾ 2.

Ամենապատիւ Զաւէն Տէր Եղիայեան եւ Բարձրաշնորհ Գէորգ Արալանեան, վերը նկարագրուած իրենց հանգամանքով, անվճար ՀԲԼՄ-ի կը փոխանցեն, եւ որ կ'ընդունի, բոլոր ստացուածքները եւ իրատունքները որոնք յառաջ եկան վերոյիշեալ նուէրէն զոր Կարապետ Մելգոնեան ըրած էր Յուլիս 25, 1921 թիւ 1642 Համաձայնագրով, վաերացուած այս գրասենեակին մէջ:

Հետեւաբար եւ ի մասնաւորի, Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան աշխատատեղիները ձրիաբար եւ ամբողջութեամբ կը փոխանցուին ՀԲԼՄ-ի, ներառեալ բոլոր անշարժ կալուածները, ապրանքները, եւն, ինչպէս.-

ա. Անշարժ Կալուածներ

1. Գահիրէի մէջ կալուած մը, որ կը բաղկանայ 3 շէնքէ, (մանրամասնութիւնները զանց կ'առնենք)... իրենց ամբողջ պարունակութեամբ, առանց բացառութեան:

2. Հողաշերտ մը, 528.85 քառակուսի մետր, տունով մը որու տարածութիւնն է 209.48 քառ. մետր (մանրամասնութիւնները զանց կ'առնենք)... ներառեալ ասէն ինչ, առանց բացառութեան:

3. 508 քառ. մ. տարածութեամբ հողաշերտ մը...

4. 785 քառ. մ. տարածքով հողաշերտ մը Գահիրէի մէջ...

5. 341.5 քառ. մ. տարածքով հողաշերտ մը Գահիրէի մէջ...

6. 1743 քառ. բիք տարածութեամբ շէնքի հողաշերտ մը...

7. 2675 քառ. բիք շինութեան յարմար հողաշերտ մը...

8. 1778 քառ. բիք տարածքով հողաշերտ մը, ուր տուն մը շինուած է արդէն...

Ա. եւ Բ. Կողմերը, հիմնուելով իրենց հանգամանքին վրայ, կը հաւաստիացնեն թէ կալուածները որ նկարագրուեցան վերեւ, իրենց սահմաններով, զերծ են որեւէ օրինական առարկութենէ: Կ.Պոլսոյ Պատրիարքութիւնը արդէն տէրն ու տիրականն է վերեւ յիշուած թիւ 1,2,3,6,7,8 կալուածներուն զորս ստացած էր Կարապետ Մելգոնեանէ որպէս նուէր, արձանագրուած որպէս թիւ 1642, Յուլիս 25, 1921 թին: Իսկ թիւ 4,5 կալուածները գնուեցան իր կողմէ Յունիս 2, 1922 թիւ 2024, Գահիրէի դատարանին կողմէ արձանագրուած, եւ գրանցուած Յունիս 4, 1922-ին, թիւ 1329, հաւանութեամբը Պրն Շառլ Պարթելեսի Բիժուլի, որ 1893-էն ի վեր օրինաւոր տէրն էր անոնց:

Պրն. Կարապետ Մելգոնեան, իր կարգին, տէրն էր վերել յիշուած կալուածներուն (զանց կ'առնենք սանրամասնութիւնները թէ ինչ պայմաններու տակ Մելգոնեաններն տիրացած են իրաքանչիւր կալուածի)... (106)

Ամենապտի Զաւէն Տէր Եղիայեան կը հաստատէ թէ վերել յիշուած կալուածներէն դուրս, որոնք արդէն կը փոխանցուին, բովանդակ հողերը որոնք գնուած են, 32 տէօնէս, Նիկոսիոյ մէջ, Կիպրոս, ինչպէս նաեւ բոլոր շէնքերը, դպրոց-որբանոցները, տուն, եւ այլ շէնքեր անբաժանելի մասը կը կազմեն նուիրատուութեան. ուստի յանձն կ'առնէ շուտով կարգադրել որ անոնք ալ փոխանցուին ՎՖԼՄ-ի:

բ. Ծխախոտ Սթերանոցներու Մէջ

27044 ծրար ծխախոտ, զանազան տեսակներէ բաղկացած (զանց կ'առնենք սանրամասնութիւնները)...

գ. Ապրանքներ Գահիրէի Մելգոնեան Գործատան Մէջ

(Մանրամասնութիւնները զանց կ'առնենք)

դ. Զանազան Բաժնետոմսեր

(Զանց կ'առնենք սանրամասնութիւնները զանազան դրամատուներու եւ ընկերութիւններու բաժնետոմսերու)

Դրամատուներ ուր պահ դրուած են այս բաժնետոմսերը, այսու իրաւասու են զանոնք յանձնելու ՎՖԼՄ-ի կամ անոր ներկայացուցիչին:

ե. Գործարաններու Մեքենաներ եւ Ապրանքներ

(Զանց կ'առնենք սանրամասնութիւնները)

զ. Կարասիներ եւ Գործիքներ

Ամէն կարասիները որ կը գտնուին Մելգոնեան Ընկերութեան գրասենեակները (սանրամասնութիւնները զանց կ'առնենք)...

է. Վաճառանիշեր (Trade Marks)

Այս փոխանցումը կ'ընդգրկէ Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան Ընկերութիւնը, ներառեալ բոլոր վաճառանիշերը որ արձանագրուած են Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ դատարաններու մօտ:

(Վաճառանիշերու ցանկը զանց կ'առնենք)

Այս վաճառանիշերու մէջ են նաեւ «Առիւծ»ի նկարը եւ բաց թելերով «Քաջահաւ»ի նկարը:

ՎՖԼՄ-ը իրաւասու է գործածելու կամ ծախելու այս բոլոր վաճառանիշները եւ նկարները, այնպէս ինչպէս որ կամի:

ՅՕԴՈՒԱԾ 3.

Նայոց Պատրիարքության վերև յիշուած ներկայացուցիչները ձրիաբար ՆԲԸՄ-ի կը փոխանցեն, եւ որ իր ներկայացուցիչին միջոցաւ զանոնք կ'ընդունի, բոլոր գումարներու պարտամորհակները որ Գ. եւ Կ. Մելգոնեան հաստատութեան պարտական են, ինչպէս

1. Գումարներ որ պարտական են նոյն ընկերութեան զանազան մասնաճիւղերը.- Եգ. £48,430.079

2. Զանազան պարտամորհակներ Եգ. £87,662.396

Պարտամորհակներու ընդ. գումար Եգ. £131,092.475

Միւս կողմէ, Գ. եւ Կ. Մելգոնեան Ընկերութիւնը զանազան անձերու պարտական է Եգ. £62,100, ինչ որ կ'իջեցնէ պարտամորհակներու գումարը Եգ. £68,992.465ի:

Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը, իր ներկայացուցիչներով, եւ Պրն. Կարապետ Մելգոնեան, եթէ որպէս Գ. Կողմ իր հաւանութիւնն ալ հարկաւոր ըլլայ, իրաւասութիւն կու տան անոնց որոնք պարտական են Գ. եւ Կ. Մելգոնեան Ընկերութեան, այդ գումարները յանձնել ՆԲԸՄ-ի որ այժմ կը վայելէ իրաւունքը, ոյժը եւ պարտականութիւնը անկաշկանդ հաւաքելու եւ տէր ըլլալու այդ գումարներուն:

Մասնաւորաբար, անոնք իրաւասութիւն կու տան դրամատուներու եւ առետրական հաստատութիւններու, որոնք հաշիւներ կը պահեն Գ. եւ Կ. Մելգոնեան Ընկերութեան համար, ինչպէս նաեւ մթերանոցներու ուր ծխախոտ կամ այլ ապրանք ի պահ դրուած է հաստատութեան անունով, մասնաւորաբար Եգիպտոսի մաքսատան մթերանոցին, ՆԲԸՄ-ի կամ իր ներկայացուցիչին յանձնել բոլոր ապրանքները, այսպէսով զիրենք զերծ կացուցանելով ասէն պատասխանատուութենէ:

Նաեւ մեր հասկացողութիւնն է որ ՆԲԸՄ-ը պարտի վճարել Գ. եւ Կ. Մելգոնեան Ընկերութեան բոլոր պարտքերը երրորդ կազմակերպութեանց, ինչպէս նաեւ որեւէ պարտք որ յառաջ կու գայ նուէրէն:

ՅՕԴՈՒԱԾ 4.

ՆԲԸՄ-ը պիտի կառավարէ Մելգոնեան հիմնարկները, ներառեալ բոլոր կալուածները եւ ապրանքները որոնք կը փոխանցուին, ինչպէս Գահիրէի Մելգոնեան ծխախոտի գործարանը, այս վերջինս՝ յանձնախումբի մը միջոցաւ, կազմուած ՆԲԸՄ-ի կողմէ եւ իր հսկողութեան ներքեւ:

ՅՕԴՈՒԱԾ 5. (107)

Բովանդակ կալուածները եւ պարտամորհակները որոնք կը փոխանցուին պիտի գործածուին հետեւեալ բարեսիրական նպատակներուն համար.-

1. Նոգատարությամբ «Մելգոնեան Վաստատություն» որ կը բաղկանայ երկու դպրոց-որբանոց, մին տղոց, միւր աղջկանց, որոնք արդէն հիմնուած են Նիկոսիոյ մէջ, Կիպրոս, եւ կարող են ընդունիլ 500 աշակերտ:

2. Տարեկան Եգ. £1000 Երուսաղէմի Պատրիարքութեան, որպէսզի Կ. Մելգոնեանի անունով սաներ ուսանին Պատրիարքութեան վանքին մէջ:

3. Տարեկան Եգ. £1000 յատկացում Պոլսոյ Պատրիարքութեան, կէսը՝ պահելու համար անկողիներ Պոլսոյ Վայոց Տիւնդանոցին մէջ Կ. Մելգոնեանի անունով, քառորդը՝ այլ բարեսիրական նպատակներու, եւ մնացեալ քառորդն ալ Պատրիարքութեան կարիքներուն համար:

4. Տարեկան Եգ. £3000 յատկացում Երեւանի Վայկական Վամալսարանին, միայն ու միայն հիմնելու եւ պահելու այնոնք Վայկական գրականութեան եւ պատմութեան, կամ ընդհանրապէս Վայկական ուսումնասիրութեանց համար:

Եւ եթէ եկանուոր արտօնէ, յատուկ ֆոնտ մը հիմնել (108)

Ա. Ստեղծելու համար Արուեստներու եւ Արհեստներու Վարժարան մը, «Մելգոնեան Վաստատություն» կից:

Բ. Այս հաստատութեանց մէջ հիմնել տպարան մը, գիտական եւ այլ Վայերէն երկեր տպելու համար:

Գ. Արեւմտեան Վամալսարաններու մէջ թոշակատր հայ գիտնականներ պահել:

Դ. Տիւնել կամ օգնել որ Կիպրոսի մէջ կամ այլուր ստեղծուին Վայկական ուսումնասիրութեան կեդրոններ:

Այս նպատակները իրագործելու համար նուիրուած բոլոր կալուածները պէտք է ծախուին անմիջապէս եւ պարտասնորհակները գանձուին եւ հաւաքուած գումարը պէտք է վերածուի Անգլիական եւ Ամերիկեան դրամանիշերու եւ «Մելգոնեան Ֆոնտ» անունով պէտք է դրամատուն դրուի, կէսը Անգլիական Կառավարական Դրամատունը, եւ միւս կէսն ալ Ուաշինկթընի Ամերիկեան Դաշնակցային Դրամատունը, կամ այլ դրամատուներ որոնք ապահով կը նկատուին ՎԲԸՄ-ի կողմէ, այսպէսով կազմելով աւանդ մը (trust): (109)

Այս դրամագրուիսին միայն տոկոսը եւ եկամուտն է որ պիտի գործածուի վերեւ յիշուած նպատակներուն համար: (110)

Մինչ այդ, հետեւեալ գումարները պէտք է քաշուին Մելգոնեան Գործատունէն կամ ընդհանուր հաշիւէն.-

1. Նիկոսիոյ Մելգոնեան Վաստատութեան շինարարական կամ պահպանման լրիւ ծախսը:

2. Եգ. £5000-7000 շինելու համար մանկապարտէզ մը Վայ աշակերտներու համար, Աղեքսանդրիոյ Վայ Եկեղեցոյ հողին վրայ:

3. Եգ. £1000 շինելու համար ինքնաշարժի ճամբայ մը Նիկոսիայէն մինչեւ Մակարայ Վանք, որ մօտն է Մելգոնեան Վաստատութեան:

4. Ապրուստի ծախս նուիրատուին՝ Պրն. Կարապետ Մելգոնեանի համար, որուն մասին կը խօսուի աւելի վերջ:

5. Գործարանները ծախուելէ վերջ, Պարոններ Տիգրան Վաճրնյեան եւ Սեդրակ Պալրքճեան, առաջինը ընդհանուր վերակացուն եւ երկրորդը գլխատր հաշուապահը Մելգոնեան գործարաններու, կը ստանան իրենց լրիւ ամսականները եւ Եգ.£1000, եւ մեր գնահատանքը եւ շնորհակալիքը:

ՅՕԴՈՒԱԾ 6.

Ըստ Վասնաձայնութեան, որ կայացաւ առաջին բաժնին մէջ նշուած կողմերուն եւ Պրն. Կարապետ Մելգոնեանի միջեւ, որպէս տարեկան ապրուստի ծախս, Յունուար 1, 1925-էն սկսեալ Եգ.£5,000 վճարելի է Պրն. Կարապետ Մելգոնեանի, որ կ'ընդունի սոյն գումարը որ կու գայ գործարանի եկամտուէն կամ կալուածներու ծախուելէն: Կը նշուի որ Պրն. Կարապետ Մելգոնեան որ Յուլիս 25, 1921 թուակիր իր նուէրով ապահոված էր Եգ.£50,000 իր անձնական գործածութեան համար, մինչեւ Դեկտ. 31, 1925 գանձած էր միայն Եգ.£22,648.932 եւ մերժած էր մնացեալը գանձել: Պրն. Կարապետ Մելգոնեան իրատունք ունի այս գումարը գանձել մաս առ մաս կամ լրիւ, ինչպէս որ ինք կամի: Յանենայն դէպս, կողմերը կը համաձայնին որ երբ Պրն. Կարապետ Մելգոնեան մահանայ, ինչ գումար որ ինք չէր գանձած պիտի աւելցուի ընդհանուր նուէրին վրայ, ինչպէս եղած էր Եգ.£50,000-ի չգանձուած բաժնի պարագային, որ յստակօրէն այժմ մաս կը կազմէ բարեսիրական նոյն գործին: (111)

ՅՕԴՈՒԱԾ 7.

Վերեւ յիշուած Պրն. Կարապետ Մելգոնեան կը հաստատէ թէ իր կողմէ որեւէ առարկութիւն չկայ որ կալուածները, պարտասնորհակները եւ այլ իրատունքները փոխանցուին ՎԲԸՄ-ի, մանաւանդ որ այս փոխանցումը տեղի կ'ունենայ որպէսզի իր բարեսիրական նպատակները աւելի ճշգրտօրէն հետապնդուին: (112)

Ան կը հաստատէ նաեւ որ գանազան նուիրատուութիւնները որոնք կը յիշուին այս Վասնաձայնագրին մէջ, կը ծառայեն իր նպատակին, որ է ուսումը աղքատ հայ աշակերտներու, եւ ամէն փոփոխութիւն որ ներմուծուած է իր Յուլիս 25, 1921 թուակիր առաջի Վասնաձայնութեան մէջ, եղած է այս ի մտի ունենալով եւ կը վայելէ իր լրիւ համաձայնութիւնը: (113)

Կրկնելով անգամ մը եւս, նուիրատուութիւնը որ ինք ըրաւ Կ.Պոլսոյ Վայոց Պատրիարքութեան, ըստ վաւերացուած Վասնաձայնագիրերու, Յուլիս 25, 1921 եւ Յունուար 5, 1924 թուականներով, Պրն. Կարապետ Մելգոնեան կը հաստատէ թէ ինք կ'ընդունի գանտնք, եւ կ'ընդունի որ Վասնաձայնութեան բոլոր կէտերուն իրատեսութիւնը Կ.Պոլսոյ Պատրիարքութենէն փոխանցու ՎԲԸՄ-ի :

ՅՕԴՈՒԱԾ 8.

Պրն. Կարապետ Մելգոնեանի եւ Ասենապատի Զաւէն Տէր Եղիայեանի, կամ այս վերջնոյն եւ Կ.Պոլսոյ Պատրիարքութեան ներկայացուցիչներուն, միջեւ կատարուած Վասնաձայնագրութիւններուն բոլոր տրամադրութիւնները որոնք հակառակ են ներկայ Վասնաձայնագրին պայմաններուն ջնջուած են եւ չեղեալ կը համարուին: (114)

ՅՕԴՈՒԱԾ 9.

Այն պարագային որ Հայկական Բանգործական Ընդհանուր Միությունը լուծուի կամ հաշուեյարդար ենթարկուի, կամ այն պարագային երբ իր գոյությունը կամ գործակցությունը անկարելի դառնայ յետ աննախատեսելի պատահարներու, դրամատուները ուր ֆոնտերը ի պահ դրուած են ըստ **Յօդուած 5-ի**, պարտին շարունակել վճառել ֆոնտի եկամուտն Մելգոնեան Հաստատութեան վարիչներուն, որոնք նշանակուած կ'ըլլան նոյն նպատակաւ Էջմիածնի Կաթողիկոսին կողմէ: Այսպէսով նշանակուած վարիչները պարտին յատկացնել նոյն եկամուտը այն նպատակին համար որ ճշտուած է այս Համաձայնագրին մէջ: (115)

ՅՕԴՈՒԱԾ 10.

Բ Կողմի (ՆԲԸՄ) ներկայացուցիչը կը հաստատէ թէ Ա Կողմի (Պատրիարքութեան) ներկայացուցիչն ստացած է բոլոր կալուածներու արտօնագիրերը, ինչպէս նաեւ ստացագիրերը, մուրհակները, հաշուի տետրակները եւ ամէն փաստաթուղթ որ կը վերաբերի այս Համաձայնագրի մէջ ակնարկուած կալուածներու, ապրանքներու եւ գումարներու. կը հաստատէ նաեւ որ ստացած է իրաւունքը որպէսզի հարկ եղած քայլերը կարենայ առնել զանոնք իրաւականօրէն փոխանցելու իրենց:

ՅՕԴՈՒԱԾ 11.

Այս Համաձայնագրէն յառաջ եկած իրաւական եւ այլ ծախսերը պիտի վճարուին Մելգոնեանի նուէրէն: (116)

ՅՕԴՈՒԱԾ 12.

Այս Համաձայնագրի պատճառաւ յառաջանալիք տուրքի պարագային գործածելու համար սիայն կը նշենք թէ **Յօդուած 1-ի** մէջ ակնարկուած կալուածներու արժէքները հետեւեալներն են.-

Կալուած թիւ	Եզ. £
1	40,000
2	2,000
3	500
4	10,000
5	9,000
6	800
7	600
8	2,500
Ապրանքներ	
բ	160,000
գ	70,000
դ	25,000
ե	30,000

q	700
է	5,000

Փաստաթուղթի վերջատրություն, իմ կարողալու վերջ եւ Պրն. Այստի կողմէ արարելէնի թարգմանութեամբ, ստորագրուեցաւ այս Հասնաձայնագիրը որ կը բաղկանայ 21 էջէ եւ 6 տողէ:

Ստորագրութիւններ.-

Կարապետ Մելգոնեան
Զաւէն Արքեպիսկոպոս
Ն.Ն. Գայարեան
Հայկ Ինայեթեան
Վկաներ.- Նէկիպ Լիան եւ Ահմէտ Ապտէլ Ազիզ

Դատարանի պաշտօնեայ.- Նուրիսոն

Հասնաձայնագրութեան Վերլուծում

(101) Միշտ կը կարծուէր եւ յայտարարած է, Մելգոնեան եղբայրները երկար տարիներ ուսումնասիրելէ վերջ իրենց կտակը յանձնէր են ՀԲԸՄ-ի: Սակայն ըստ կտակին, անոնք յարմար դատած են իրենց երագին իրականացման գործը յանձնել Պոլսոյ Պատրիարքութեան: Յետագային Պատրիարքութիւնն է որ առ աջարկած է Կ. Մելգոնեանին որպէս զի կտակը փոխանցուի ՀԲԸՄ-ին: (104)

(102) Իրաական գետնի վրայ կարեւոր է նշել թէ Կ. Մելգոնեան արդէն կը ստեղծէ նախընթաց սը, Պոլսոյ Պատրիարքութենէն ետ առնելով իր «նուէրը». քանի որ Պատրիարքութիւնը անկարելի կը նկատէր շարունակելն իրեն վստահուած առաքելութիւնը : Մանաւանդ Ամերիկեան օրէնսգիտութիւնը մեծ կարեւորութիւն կ'ընծայէ նուիրատուին «մտադրութեան». մեկնաբանելու համար որեւէ Հասնաձայնութիւն:

(103) Այս պարբերութենէն կը տեղեկանանք որ Մելգոնեանի առաջին շէնքերը կարուցուած էին Պատրիարքութեան կողմէ, որ ստուգի խղճնաւորէն կը կատարէր իրեն յանձնուած գործը: Ուրեմն, զարմանալի չէ որ երբ Պատրիարքութիւնը բարեմտօրէն կը յանձնարարէ ՀԲԸՄ-ը. այս առաքելութիւնը շարունակելու եւ արթինատրելու համար: Կարապետ Մելգոնեան կը հաւանի, «մանաւանդ որ այս փոխանցումը տեղի կ'ունենայ որպէսզի իր բարեսիրական նպատակները աւելի ճշգրիտօրէն հետապնդուին»: (112)

(105) Այս փոքր պարբերութենէն կը հասկնանք թէ ՀԲԸՄ-ը կը գիտակցի որ հոգատարութիւն մըն է որ կը ստանձնէ, զոր նախապէս Պատրիարքութիւնն էր որ յանձն առած էր:

(106) Ուշագրաւ է որ Կ. Մելգոնեան անենայետի մանրամասնութիւններով կը նկարագրէ թէ ինչպէս իրաքանչիւր կալուած անցաւ իր եւ եղբօր ձեռքը, որպէսզի իրենց ժառանգը ապագային չ'ենթարկուի աւելորդ դատական հետապնդումներու, եւ ՀԲԸՄ-ը անխաբան կարենայ հետապնդել նուիրատուին ուսումնական եւ բարեսիրական ծրագիրները:

(107) Կ. Մելգոնեանի կողմէ յստակ կերպով կը ներկայացուին այն նպատակները որոնց համար կը յատկացնէ հարստութիւնը: Առաջին նպատակ ըլլալով կը նշանակուի արդէն հիմնուած Մելգոնեան Վաստատութեան հոգատարութիւնը Մելգոնեանը փակելու կամ աննշան դպրոցի մը վերածելու փորձը բոլորովին կը հակասէ այս պարբերութեան, երբ նուիրատուն կը նախատեսէր մինչեւ 500 աշակերտ ընդունիլ: Վարժարանի փակման հակառակորդները յաջողապէս կրնան արդարացնել դատարանի մը առջեւ որ հսկայ գիշերօթիկ վարժարան մը փոքր ցերեկօթիկ դպրոցի մը վերածելը «հոգատարութիւն» չէ. ուստի ՎՖԼՄ-ը իրեն ստանձնած պաշտօնին մէջ կը թերանայ:

Կենթադրենք որ երեք հիմնարկները, որոնք յիշուած են վերեւ, կանոնաւորաբար ստացած ըլլան իրենց տարեկան յատկացումները եւ պիտի շարունակեն ստանալ:

(108) Մնացեալ նպատակները միայն կրնային իրականանալ եթէ եկամուտը արտօնէր: Տասնամեակներէ ի վեր ՎՖԼՄ-ը հաշիւ չէ ներկայացուցած Մելգոնեանի ֆոնտի գործածութեան մասին, ուստի կարող չենք այդ մասին գաղափար յայտնել:

Սակայն եւ այնպէս, եթէ այս հարցը մինչեւ դատարան հասնի, խիստ հաւանաբար ՎՖԼՄ-ը ստիպուի լրիւ հաշիւ ներկայացնելու թէ տարիներու ընթացքին ինչ պատահեցաւ Մելգոնեանի կտակած ֆոնտին (հիմնադրամին):

(109) Երկու գաղափար կարելու են այս պարբերութեան մէջ:

Ամէն կալուած, ապրանք, ելն, ծախուելէ վերջ եկամուտը մաս պէտք է կազմէ Մելգոնեան ֆոնտին, որու տոկոսովն է որ վարժարանը պէտք է մատակարարուի: Վերջերս հարց եղած էր թէ Մելգոնեանի հողին վրայ շինուած առետրական հաստատութիւններու եկամուտը Մելգոնեանի կտակին մաս կը կազմէ՞ր կամ ոչ, կամ գումարներ որ գանձուեցան Մելգոնեանի հողերէն մաս մը ծախելով, պէտք է որ մաս կազմեն Մելգոնեան ֆոնտին կամ ոչ: Այս պարբերութիւնը շատ յստակ կերպով այս հարցումներուն կը պատասխանէ. «այո՛, բոլոր կալուածներէն եւ ապրանքներէն գոյացած եկամուտները մաս կը կազմեն Մելգոնեան ֆոնտին»:

Միւս կարելու գաղափարն ալ այն է որ թէեւ Կ. Մելգոնեան ունի իր նախասիրութիւնը թէ ինչպէս պէտք է տոկոսի դնել իր նուիրատուութիւնը, բայց վերջի նախադասութեամբ կ'արտօնէ որ ՎՖԼՄ-ի վարիչները իրենց դատողութիւնը գործածեն այս ուղղութեամբ:

(110) Իր ժամանակին, Կ. Մելգոնեանի նուէրը այնքան վիթխարի էր որ տարեկան տոկոսին փոքր մէկ բաժինը միայն կը մատակարարէր վարժարանը: Իսկ 1930-ական տարիներուն, դրամին արժէքը շատ աւելի բարձրացաւ: Դատական հետապնդումի պարագային ՎՖԼՄ-ը շատ դժուարին կացութեան կրնայ մատնուիլ այս կէտին շուրջ:

Դիւրին է ժողովուրդին ըսել, որ «ՎՖԼՄ-ը ամէն տարի Մելգոնեանի բացը կը գոցէ», մանաւանդ երբ որեւէ հաշուետուութիւն չէ եղած: Բայց հարցին բնոյթը բոլորովին կը փոխուի երբ դատարանը բացատրութիւն պահանջէ թէ Մելգոնեանի կտակը ի՞նչպէս գործածուած է տարիներու ընթացքին:

(111) Զանի այս կէտը անձնական բնոյթ ունի Կ. Մելգոնեանի համար, ընդհանրապէս կը վրիպի ամէնուն ուշադրութենէն: Մինչդեռ, իրաւական գետնի վրայ ծայր աստիճան կարելու կէտ մըն է, քանի որ միանգամ ընդ միշտ կը հաստատէ Վասնաձայնութեան իրաւական ոյժը եւ ուղղակիօրէն կը հակասէ

ՎԲԼՄ-ի պնդումին թե՛ ինք իրաւունքն ունին վարուելու Մելգոնեանի նուէրին հետ այնպէս ինչպէս որ կը ցանկայ:

Բացատրենք:

Եթէ Մելգոնեանի յատկացումը պարզ նուէր մը ըլլար որ ՎԲԼՄ-ը կարենար իր ուզած ձեւով գործածել, այդ պարագային ՎԲԼՄ-ը իրաւունք պիտի ունենար Կ. Մելգոնեանի ըսելու թէ... «ՎԲԼՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը որոշում անցուց որ փոխանակ ձեզի տարեկան 5000 Եգ. ոսկի յատկացնելու, այդ գումարով մենք կը նախընտրենք Տէր Զօրի մէջ 1000 հոգի կերակրելու...»: Գաղափարին ծիծաղելիութիւնը շատ յստակ պիտի ըլլար, չ՞է:

Երբ Կ. Մելգոնեան իր ամէնօրեայ ապրուստին համար կ'ապաւինի այս Վասնաձայնութեան, ուրեմն կը նշանակէ որ Վասնաձայնութիւնը կը նկատէ անբեկանելի: Նոյնը պիտի ընէ նաեւ որեւէ դատարան: Ուրեմն, երբ մենք կը փորձենք վերլուծել այս Վասնաձայնագիրը, ստիպուած ենք նոյն լրջութեամբ մօտենալ անոր:

(113) Վճարովի աշակերտ ընդունելու մասին խօսք չկայ: Բայց այդ չի նշանակեր որ ապօրինի է նման ընդունելութիւն մը: Սակայն սինչեւ 500 աղքատ աշակերտի առիթ պէտք է ընծայուի ձրիաբար ուսանելու:

(114) Իրաւականօրէն ուրիշ կարետր կէտ մըն ալ այս է որ կը ստեղծէ նախընթաց մը եւս: Կը տեսնենք թէ Կ. Մելգոնեան որքան բժախնդրօրէն կը պաշտպանէ իր ժառանգը ապագայ հարցերու եւ խոչընդոտներու դէմ. ճշգրտօրէն շեշտելով, որ չեղեալ կը համարէ որեւէ «գաղափար» որ հակառակ է ներկայ Վասնաձայնագրին: Ուրեմն, այնքան ատեն որ նման յօդուածով մը այս հասնաձայնութիւնը չեղեալ չէ նկատուած, ներկայ հասնաձայնութիւնը ի գօրու է:

(115) Կ. Մելգոնեան կ'ուզէ որ իրենց երագին արդիւնք Մելգոնեան Վաստատութիւնը շարունակուի, եթէ նոյնիսկ ՎԲԼՄ-ը ինք դադրի գոյութիւն ունենալէ:

Կարետր է նշել որ Էջմիածնի Կաթողիկոսը պարտի պաշտօնի կոչել անձեր որպէսի այս աշխատանքը շարունակեն: Կ. Մելգոնեան նոյնիսկ չ'արտօներ որ Կաթողիկոսը տնօրինէ Մելգոնեանի ապագան. ըստ իր ցանկութեան ու կասքին: Այլ խօսքով, Մելգոնեան Վաստատութիւնը պարտի շարունակել իր առաքելութիւնը Մելգոնեան եղբայրներու ծրագրին հասնաձայն:

(116) Ըստ հասնաձայնութեան, որեւէ մէկը որ դատական ծախսեր ունենայ Մելգոնեաններու կտակը պաշտպանելու համար, խիստ հաւանաբար կրնայ օգտուիլ այս յօդուածէն, եւ ծախսերը կը վճարուին Մելգոնեանի նուէրէն, ներառեալ ՎԲԼՄ-ը կամ ուրիշներ որոնք տրամադիր են Մելգոնեանի կտակը պաշտպանելու:

x

x x

Ամփոփելով վերեւ յիշուած գաղափարները, կը տեսնենք թէ Ադա Կարապետ Մելգոնեան ամէն կարելին ըրած է որպէսզի իր մտադրութիւնը ըլլայ յստակ եւ ՎԲԼՄ-ը առանց դժուարութեան կարենայ Մելգոնեաններու կրթական նպատակները իրականագնել(102, 103): Ան նոյնպէս կը նախատեսէ թէ իր վարժարանը ինչ ձեւով կրնայ գործել եթէ նոյնիսկ պարագաներու բերմամբ ՎԲԼՄ-ը անկարող դառնայ այս աշխատանքը շարունակելու (115):

Ան կնքած է հասնաձայնություին սը որ կը մնայ միշտ ի գորու (114):

Նասնաձայնութեանիրաական ոյժին վրայ կասկած անգամ չունի Կ. Մելգոնեան որ իր ամէնօրեայ ապրուստին համար անգամ անոր կ'ապաւինի (111) եւ որուն կը գիտակցի եւ գոր կ'ընդունի ՆԲԸՄ-ը (105):

Այս Նասնաձայնութեանանմիջական նպատակները կը ներկայացուին շատ յտակ կերպով (107), եւ վարժարանին ապագան ապահով դարձնելու համար կը յատկացուի վիթխարի գումարի սը տոկոսը (109):

Իրական մեկնաբանութեամբ, այս գաղափարներէն իրաքանչիւրը արդէն յտակօրէն կը բացատրէ Կ. Մելգոնեանի մտադրութիւնը: Իսկ երբ ամէնքը միասին առնենք. իրականօրէն գրեթէ անկարելի կը դառնայ հասնաձայնութիւնը բեկանել, կամ փորձել զայն այլ կերպով մեկնաբանել:

Ուստի, խուսափելու համար ապօրինի կացութիւններ ստեղծելէ, յարմար կը գտնենք որ ՆԲԸՄ-ը յետս կոչէ յապճեպով առնուած որոշումը, որ կը հակասէ նուիրատուին բոլոր նպատակներուն:

Այս ուղղութեամբ, նաեւ յարմար կը դատենք որ ՆԲԸՄ-ի բարեկամ անձեր եւ կազմակերպութիւններ իրենց բարեացակամ հանգամանքը գործածելով օգնեն ՆԲԸՄ-ի որ միշտ յարզէ օրէնքի սահմանները: Ի մտի ունինք մասնատրարար Ռասկավար Ազատական Կուսակցութեան եւ Նայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան պէս կազմակերպութիւններ (նկատի ունենալով Նախարար Վարդան Օսբանեանի միջնորդելու փափաքը այս հարցին բարուք լուծման ի խնդիր), որոնք որեւէ շահ չունին քաջալերելու ՆԲԸՄ-ը որ կիրարկելու համար առնէ որոշումներ որոնց օրինականութիւնը աւելի քան խնդրական է, եւ որ միայն կը տկարացնէ Կազմակերպութեան եւ զայն քաջալերողներուն վարկը յաչս Նայ ժողովուրդին, նաեւ իր շրջավայրի հանրութեան ի սփիւռս աշխարհի:
